Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 8

Գործառնական սեգմենտներ

Հիմնական սկզբունքը

1. **Կազմակերպությունը պետք է բացահայտի տեղեկատվություն, որն իր ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին հնարավորություն կընձեռի գնահատելու ձեռնարկատիրական այն գործունեությունների բնույթը և ֆինանսական հետևանքները, որոնցում ինքը ներգրավված է, ինչպես նաև գնահատելու այն տնտեսական միջավայրը, որում ինքը գործում է:**

Գործողության ոլորտը

2. Սույն ՖՀՄՍ-ը պետք է կիրառվի՝

   ա) այն կազմակերպության առանձին կամ անհատական ֆինանսական հաշվետվությունների համար,

      (i) որի պարտքային կամ բաժնային գործիքները վաճառվում են բաց շուկայում (տեղական կամ արտերկրյա ֆոնդային բորսայում կամ արտաբորսայական շուկայում, ներառյալ տեղական և տարածաշրջանային շուկաները), կամ

      (ii) որը արժեթղթերի հանձնաժողովում կամ կարգավորող այլ կառույցում իր ֆինանսական հաշվետվությունները գրանցել է կամ գտնվում է գրանցելու փուլում՝ բաց շուկայում գործիքների որևէ դաս թողարկելու նպատակով:

   բ) մայր կազմակերպության հետ խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար,

      (i) որի պարտքային կամ բաժնային գործիքները վաճառվում են բաց շուկայում (տեղական կամ արտերկրյա ֆոնդային բորսայում կամ արտաբորսայական շուկայում, ներառյալ տեղական և տարածաշրջանային շուկաները), կամ

      (ii) որը արժեթղթերի հանձնաժողովում կամ կարգավորող այլ կառույցում իր համախմբված ֆինանսական հաշվետվությունները գրանցել է կամ գտնվում է գրանցելու փուլում՝ բաց շուկայում գործիքների որևէ դաս թողարկելու նպատակով:

3. Եթե կազմակերպությունը, որից չի պահանջվում կիրառել սույն ՖՀՄՍ-ը, ընտրում է բացահայտել սեգմենտների վերաբերյալ այնպիսի տեղեկատվություն, որը չի համապատասխանում սույն ՖՀՄՍ-ին, ապա այն չպետք է այդ տեղեկատվությունը նկարագրի որպես սեգմենտային տեղեկատվություն:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

4. Եթե ֆինանսական զեկույցը ներառում է և՛ սույն ՖՀՄՍ-ի գործողության ոլորտում գտնվող մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվությունները, և՛ մայր կազմակերպության առանձին ֆինանսական հաշվետվությունները, ապա սեգմենտային տեղեկատվությունը պահանջվում է ներկայացնել միայն համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

Գործառնական սեգմենտներ

5. Գործառնական սեգմենտը կազմակերպության բաղադրիչ է՝

   ա) որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ նույն կազմակերպության այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը),

   բ) որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են կազմակերպության գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով,

   գ) որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն:

   Գործառնական սեգմենտը կարող է իրականացնել այնպիսի գործունեություններ, որոնցից դեռևս չի վաստակել հասույթներ, օրինակ՝ գործարկման աշխատանքները կարող են համարվել գործառնական սեգմենտներ մինչև հասույթ ստանալը:

6. Պարտադիր չէ, որ կազմակերպության բոլոր մասերը համարվեն գործառնական սեգմենտ կամ գործառնական սեգմենտի մաս: Օրինակ՝ կորպորատիվ գլխամասային գրասենյակները կամ որոշ ֆունկցիոնալ բաժիններ կարող են չվաստակել հասույթներ կամ կարող են վաստակել հասույթներ, որոնք կազմակերպության գործունեության համար համարվում են բացառապես պատահական, հետևաբար չեն համարվի գործառնական սեգմենտներ: Սույն ՖՀՄՍ-ի նպատակով, կազմակերպության հետաշխատանքային հատուցումների պլանները չեն համարվում գործառնական սեգմենտներ:

7. «Գլխավոր գործառնական որոշում կայացնող» տերմինը որոշակիացնում է գործառույթ, և պարտադիր չէ, որ այն նշանակի հատուկ պաշտոն ունեցող որևէ ղեկավար: Նշված գործառույթի էությունը կազմակերպության գործառնական սեգմենտներին միջոցներ բաշխելն է, ինչպես նաև դրանց գործունեության արդյունքները գնահատելը: Հաճախ, կազմակերպության գլխավոր գործառնական որոշում կայացնողը այդ կազմակերպության գլխավոր գործադիր պաշտոնյան կամ գլխավոր գործառնական պաշտոնյան է, սակայն, այն կարող է լինել նաև, օրինակ, գործադիր տնօրենների կամ այլ անձանց խումբը:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

8. Բազմաթիվ կազմակերպությունների համար, գործառնական սեգմենտների՝ 5-րդ պարագրաֆում նկարագրված երեք հատկանիշները հստակորեն բնութագրում են իրենց գործառնական սեգմենտները: Այնուամենայնիվ, կազմակերպությունը կարող է հաշվետվություններ պատրաստել, որոնցում իր ձեռնարկատիրական գործունեությունները ներկայացված են տարբեր ձևերով: Եթե գլխավոր գործառնական որոշում կայացնողը օգտագործում է ավելի քան մեկ սեգմենտային տեղեկատվության փաթեթ, այլ գործոններ կարող են որոշակիացնել բաղադրիչների առանձին փաթեթ՝ որպես կազմակերպության գործառնական սեգմենտներ, ներառյալ յուրաքանչյուր բաղադրիչի բիզնեսի բնույթը, դրանց համար պատասխանատու ղեկավար անձանց առկայությունը և տնօրենների խորհրդին ներկայացված տեղեկատվությունը:

9. Սովորաբար, գործառնական սեգմենտն ունի սեգմենտի ղեկավար, որն ուղղակիորեն հաշվետու է գլխավոր գործառնական որոշում կայացնողին, որի հետ գտնվում է պարբերաբար հաղորդակցության մեջ՝ գործառնական գործունեությունները, ֆինանսական արդյունքները, կանխատեսումները կամ սեգմենտին վերաբերող պլանները քննարկելու նպատակով: ‘Սեգմենտի ղեկավար’ տերմինը որոշակիացնում է գործառույթ, և պարտադիր չէ, որ այն նշանակի հատուկ պաշտոն ունեցող որևէ ղեկավար: Գլխավոր գործառնական որոշում կայացնողը գործառնական որոշ սեգմենտների համար կարող է նաև լինել սեգմենտի ղեկավար: Մեկ ղեկավարը կարող է լինել ավելի քան մեկ գործառնական սեգմենտի ղեկավար: Եթե 5-րդ պարագրաֆում նկարագրված հատկանիշները կիրառվում են կազմակերպության ավելի քան մեկ բաղադրիչների խմբի համար, սակայն սեգմենտի ղեկավարները պատասխանատու են միայն բաղադրիչների մեկ խմբի համար, բաղադրիչների այդ խմբերն են կազմում գործառնական սեգմենտները:

10. 5-րդ պարագրաֆում նշված հատկանիշները կարող են կիրառվել բաղադրիչների երկու կամ ավելի փոխլրացնող խմբերի համար, որոնց նկատմամբ ղեկավարները կրում են պատասխանատվություն: Երբեմն այդ կառուցվածքը կոչվում է «կազմակերպության մատրիցային ձև»: Օրինակ՝ որոշ կազմակերպություններում որոշ ղեկավարներ աշխարհով մեկ են պատասխանատու իրենց արտադրանքների և ծառայությունների տարբեր տեսականիների համար, մինչդեռ այլ ղեկավարներ պատասխանատու են դրանց համար միայն աշխարհագրական որոշակի տարածաշրջանների մակարդակով: Գլխավոր գործառնական որոշում կայացնողը կանոնավոր կերպով վերլուծում է բաղադրիչների երկու խմբերի գործառնական արդյունքները, և երկուսի համար էլ ֆինանսական տեղեկատվությունը մատչելի է: Այդ դեպքում կազմակերպությունը, հիմնական սկզբունքի հիման վրա, պետք է որոշի, թե բաղադրիչներից որ խումբն է կազմում գործառնական սեգմենտը:

Հաշվետու սեգմենտներ

11. Կազմակերպությունը պետք է առանձին տեղեկատվություն ներկայացնի յուրաքանչյուր գործառնական սեգմենտի վերաբերյալ, որը՝

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ա) որոշակիացված է 5-10 պարագրաֆների համաձայն կամ այդ սեգմենտներից երկուսի կամ ավելիի ընդհանրացման արդյունք է՝ համաձայն 12-րդ պարագրաֆի, և

բ) գերազանցում է 13-րդ պարագրաֆում նշված քանակական սահմանային ցուցանիշները:

14-19 պարագրաֆները ներկայացնում են այլ իրավիճակներ, երբ գործառնական սեգմենտի վերաբերյալ պետք է ներկայացնել առանձին տեղեկատվություն:

Ընդհանրացման չափանիշներ

12. Գործառնական սեգմենտները համանման տնտեսական հատկանիշներ ունենալու դեպքում հաճախ ցուցադրում են համանման երկարաժամկետ ֆինանսական արդյունքներ: Օրինակ՝ գործառնական երկու սեգմենտի համար երկարաժամկետ միջին համախառն շահույթը (մարժան) կլիներ համանման, եթե դրանք ունենային համանման տնտեսական հատկանիշներ: Երկու կամ ավելի գործառնական սեգմենտները կարող են ընդհանրացվել մեկ միասնական գործառնական սեգմենտում, եթե ընդհանրացումը համապատասխանում է սույն ՖՀՄՍ-ի հիմնական սկզբունքին, սեգմենտներն ունեն համանման տնտեսական հատկանիշներ և նույնն են ստորև նշված բոլոր առումներով՝

ա) արտադրանքների կամ ծառայությունների բնույթով,

բ) արտադրական գործընթացների բնույթով,

գ) իրենց արտադրանքների կամ ծառայությունների համար գնորդների տիպով կամ դասով,

դ) իրենց արտադրանքները բաշխելու կամ ծառայությունները մատուցելու համար օգտագործվող մեթոդներով,

ե) եթե կիրառելի է, կարգավորող դաշտի բնույթով, օրինակ՝ բանկային ոլորտ, ապահովագրություն կամ կոմունալ ծառայություններ:

Քանակական սահմանային ցուցանիշներ

13. Կազմակերպությունը պետք է առանձին տեղեկատվություն ներկայացնի գործառնական այն սեգմենտի վերաբերյալ, որը բավարարում է ստորև նշված քանակական սահմանային ցուցանիշներից որևէ մեկը՝

ա) սեգմենտի ներկայացված հասույթը, որը ներառում է և՛ արտաքին գնորդներին վաճառքներից, և՛ միջսեգմենտային վաճառքներից կամ տրանսֆերտներից ստացված հասույթը, կազմում է գործառնական բոլոր սեգմենտների ընդհանուր հասույթի՝ ներքին և արտաքին, առնվազն 10 տոկոսը,

բ) սեգմենտի հայտարարած շահույթի կամ վնասի բացարձակ մեծությունը՝ (i) վնաս չհայտարարած բոլոր գործառնական սեգմենտների հայտարարած

համախմբված շահույթի և (ii) վնասի հայտարարած բոլոր գործառնական սեգմենտների հայտարարած համախմբված վնասի բացարձակ մեծություններից առավելագույնի առնվազն 10 տոկոսն է,

գ) սեգմենտի ակտիվները կազմում են բոլոր գործառնական սեգմենտների համընդհանուր ակտիվների առնվազն 10 տոկոսը:

Գործառնական սեգմենտները, որոնք չեն բավարարում վերոհիշյալ քանակական սահմանային ցուցանիշներից որևէ մեկը, կարող են համարվել հաշվետու և առանձին բացահայտվել, եթե կազմակերպության ղեկավարության կարծիքով այդ սեգմենտի վերաբերյալ տեղեկատվությունը օգտակար կլինի ֆինանսական հաշվետվություններ օգտագործողների համար:

14. Կազմակերպությունը գործառնական այն սեգմենտների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք չեն բավարարում քանակական սահմանային ցուցանիշները, կարող է միավորել գործառնական այլ սեգմենտների վերաբերյալ տեղեկատվության հետ, որոնք չեն բավարարում հաշվետու սեգմենտի քանակական սահմանային ցուցանիշները, եթե գործառնական սեգմենտներն ունեն համանման տնտեսական հատկանիշներ և բավարարում են 12-րդ պարագրաֆում թվարկված ընդհանրացման չափանիշների մեծ մասը:

15. Եթե գործառնական սեգմենտների կողմից ներկայացվող ընդհանուր արտաքին հասույթը կազմակերպության հասույթի 75 տոկոսից պակաս է, ապա անհրաժեշտ է որոշակիացնել լրացուցիչ գործառնական սեգմենտներ՝ որպես հաշվետու սեգմենտներ (նույնիսկ եթե դրանք չեն բավարարում 13-րդ պարագրաֆում նշված չափանիշները), մինչև կազմակերպության հասույթի առնվազն 75 տոկոսը ներառվի հաշվետու սեգ-մենտների կազմում:

16. Հաշվետու չհամարվող այլ ձեռնարկատիրական գործունեությունների և գործառնական սեգմենտների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է միավորվի և բացահայտվի “բոլոր այլ սեգմենտներ” կատեգորիայում՝ այլ համադրվող հոդված-ներից առանձին՝ 28-րդ պարագրաֆով պահանջվող համադրումներն իրականաց-նելիս: ‘Բոլոր այլ սեգմենտներ’ կատեգորիայում ներառված հասույթի աղբյուրները պետք է նկարագրվեն:

17. Եթե, ըստ կազմակերպության ղեկավարության դատողության, անմիջապես նախորդող ժամանակաշրջանում որպես հաշվետու սեգմենտ որոշակիացված գործառնական սեգմենտը շարունակում է լինել նշանակալի, ապա այդ սեգմենտի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է շարունակվի ներկայացվել առանձին ընթա-ցիկ ժամանակաշրջանում, եթե նույնիսկ այն այլևս չի բավարարում 13-րդ պարագրաֆում ներկայացված հաշվետվողականության չափանիշները:

18. Եթե գործառնական սեգմենտը ընթացիկ ժամանակաշրջանում, քանակական սահմանային ցուցանիշների համաձայն, որոշակիացվում է որպես հաշվետու սեգմենտ, համադրելիության նպատակներով ներկայացված նախորդ

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ժամանակաշրջանի սեգմենտային տվյալները պետք է վերահաշվարկվեն՝ նոր հաշվետու սեգմենտը որպես առանձին սեգմենտ արտացոլելու համար, եթե նույնիսկ այդ սեգմենտը նախորդ ժամանակաշրջանում չէր բավարարում 13-րդ պարագրաֆի հաշվետվողականության չափանիշները, և եթե միայն անհրաժեշտ տեղեկատվությունն առկա է և դրա մշակման արժեքը չի լինի չափազանց բարձր:

19. Կազմակերպության կողմից առանձին բացահայտվող հաշվետու սեգմենտների թվի նկատմամբ կարող է լինել գործնական սահմանաչափ, որի գերազանցման դեպքում սեգմենտային տեղեկատվությունը կարող է դառնալ չափազանց մանրամասնեցված: Չնայած որևէ կոնկրետ սահմանաչափ սահմանված չէ՝ այնուամենայնիվ, երբ, 13-18 պարագրաֆների համաձայն, հաշվետու սեգմենտների թիվը գերազանցում է տասը, կազմակերպությունը պետք է դիտարկի՝ արդյոք այն գործնական առումով հասել է իր սահմանաչափին:

Բացահայտումը

20. Կազմակերպությունը պետք է բացահայտի այն տեղեկատվությունը, որն իր ֆինանսական հաշվետվությունները օգտագործողներին հնարավորություն կտա գնահատելու ձեռնարկատիրական այն գործունեությունների բնույթը և ֆինանսական հետևանքները, որոնցում այն ներգրավված է, և տնտեսական միջավայրը, որում այն գործում է:

21. 20-րդ պարագրաֆում ներկայացված սկզբունքը կիրառելու նպատակով՝ կազմակերպությունը յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար, որի գծով ներկայացնում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, պետք է բացահայտի հետևյալը՝

ա) ընդհանուր տեղեկատվություն, ինչպես նկարագրված է 22-րդ պարագրաֆում,

բ) տեղեկատվություն հաշվետու սեգմենտի շահույթի կամ վնասի վերաբերյալ, ներառյալ հաշվետու սեգմենտի շահույթում կամ վնասում ներառված հասույթները և ծախսերը, ինչպես նաև սեգմենտի ակտիվների, սեգմենտի պարտավորությունների և չափման հիմունքի վերաբերյալ, ինչպես նկարագրված է 23-27-րդ պարագրաֆներում,

գ) սեգմենտի հասույթների, հաշվետու սեգմենտի շահույթի կամ վնասի, սեգմենտի ակտիվների, սեգմենտի պարտավորությունների և սեգմենտի այլ էական հոդվածների ընդհանուր գումարների համապատասխանեցումը կազմակեր-պության համապատասխան գումարների հետ, ինչպես նկարագրված է 28-րդ պարագրաֆում:

Հաշվետու սեգմենտների ֆինանսական վիճակի մասին հաշվետվության գումարների համապատասխանեցումը կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվության գումարների հետ պահանջվում է յուրաքանչյուր ամսաթվի համար,

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

որի դրությամբ ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն: Նախորդ ժամանակաշրջանների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է վերահաշվարկվի, ինչպես նկարագրված է 29-րդ և 30-րդ պարագրաֆներում:

Ընդհանուր տեղեկատվություն

22. Կազմակերպությունը պետք է բացահայտի ստորև նշված ընդհանուր տեղեկատվությունը՝

ա) կազմակերպության հաշվետու սեգմենտները որոշակիացնելու համար օգտագործվող գործոնները, ներառյալ կազմավորման հիմքը (օրինակ՝ արդյոք ղեկավարությունը մտադրված է եղել կազմակերպությունը կազմավորել ըստ արտադրանքների և ծառայությունների, աշխարհագրական տարածքների, կարգավորող դաշտերի տարբերությունների, թե ըստ գործոնների համակցության, և արդյոք գործառնական սեգմենտները ընդհանրացվել են),

աա) պարագրաֆ 12-ի ընդհանրացման չափանիշները կիրառելիս ղեկավարության կատարած դատողությունները: Սա ներառում է գործառնական սեգմենտների սեղմ նկարագրությունը, որոնք ընդհանրացվել են այս եղանակով, և տնտեսական ցուցանիշները, որոնք գնահատվել են՝ հաշվի առնելով այն պայմանը, որ ընդհանրացման գործառնական սեգմենտներն ունենան համանման տնտեսական հատկանիշներ, և

բ) արտադրանքների և ծառայությունների տեսակները, որոնցից յուրաքանչյուր հաշվետու սեգմենտ ստանում է իր հասույթները:

Շահույթի կամ վնասի, ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն

23. Կազմակերպությունը յուրաքանչյուր հաշվետու սեգմենտի վերաբերյալ պետք է ներկայացնի շահույթի կամ վնասի ցուցանիշը (չափը): Կազմակերպությունը յուրաքանչյուր հաշվետու սեգմենտի վերաբերյալ պետք է ներկայացնի ընդհանուր ակտիվների և պարտավորությունների ցուցանիշը (չափը), եթե այդպիսի գումարներ կանոնավոր կերպով ներկայացվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողին: Կազմակերպությունը նաև յուրաքանչյուր հաշվետու սեգմենտի վերաբերյալ պետք է բացահայտի ստորև նշվածը, եթե նշված գումարները ներառվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից վերանայված սեգմենտի շահույթի կամ վնասի ցուցանիշում (չափի մեջ), կամ եթե դրանք այլ կերպ կանոնավոր կերպով ներկայացվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողին, եթե նույնիսկ չեն ներառվում սեգմենտի շահույթի կամ վնասի ցուցանիշում (չափի մեջ)՝

ա) հասույթ արտաքին գնորդներից,

բ) հասույթ նույն կազմակերպության գործառնական այլ սեգմենտների հետ իրականացրած գործառնություններից,

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

գ) տոկոսային հասույթ,

դ) տոկոսային ծախս,

ե) մաշվածություն և ամորտիզացիա,

զ) *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ՀՀՄՍ 1-ի (վերանայված՝ 2007 թվականին) 97-րդ պարագրաֆի համաձայն բացահայտված եկամտի և ծախսերի էական հոդվածներ,

է) ասոցիացված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկումների շահույթում կամ վնասում կազմակերպության բաժնեմասը՝ հաշվառված բաժնեմասնակցության մեթոդով,

ը) շահութահարկի գծով ծախս կամ փոխհատուցում,

թ) էական ոչ դրամային հոդվածներ, բացառությամբ մաշվածության և ամորտիզացիայի:

Կազմակերպությունը յուրաքանչյուր հաշվետու սեգմենտի համար տոկոսային հասույթը պետք է ներկայացնի տոկոսային ծախսերից առանձին, եթե սեգմենտի հասույթների հիմնական մասը չի ստացվում տոկոսներից, և սեգմենտի գործունեության արդյունքները գնահատելու և միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու համար գլխավոր գործառնական որոշում կայացնողը հիմնականում չի հիմնվում տոկոսային զուտ հասույթի վրա: Նման դեպքում կազմակերպությունը կարող է ներկայացնել այդ սեգմենտի տոկոսային հասույթը՝ հանած իր տոկոսային ծախսերը, և բացահայտել այդ փաստը:

24. Կազմակերպությունը յուրաքանչյուր հաշվետու սեգմենտի համար պետք է բացահայտի ստորև նշվածը, եթե նշված գումարները ներառվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից վերանայված սեգմենտի ակտիվների ցուցանիշում (չափի մեջ) կամ այլ կերպ կանոնավոր կերպով տրամադրվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողին, եթե նույնիսկ չեն ներառվում սեգմենտի ակտիվների ցուցանիշում (չափի մեջ)՝

ա) ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրման գումարը՝ հաշվառված բաժնեմասնակցության մեթոդով,

բ) ոչ ընթացիկ ակտիվների ավելացումների գումարները[1]՝ բացառությամբ ֆինանսական գործիքների, հետաձգված հարկային ակտիվների[1], սահմանված զուտ հատուցումների գծով ակտիվների (տե՛ս *«Աշխատակիցների հատուցումներ»* ՀՀՄՍ 19-ը) և ապահովագրության պայմանագրերից առաջացող իրավունքների:

[1] Ըստ իրացվելիության ներկայացման դասակարգված ակտիվների առումով՝ ոչ ընթացիկ ակտիվները այն ակտիվներն են, որոնք ներառում են հաշվետու ժամանակաշրջանից տասներկու ամիս հետո փոխհատուցումը ակնկալվող գումարներ:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Չափումը

25. Սեգմենտի յուրաքանչյուր ներկայացված հոդվածի գումարը պետք է լինի գլխավոր գործառնական որոշում կայացնողին ներկայացվող ցուցանիշ (չափ)՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ վերջինիս կողմից որոշումներ կայացնելու և սեգմենտի գործունեության արդյունքները գնահատելու համար: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կատարած ճշգրտումները և փոխբացառումները, ինչպես նաև հասույթների, ծախսերի և օգուտների կամ վնասների բաշխումները պետք է ներառվեն հաշվետու սեգմենտի շահույթը կամ վնասը որոշելիս, միայն եթե դրանք ներառվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից կիրառվող սեգմենտի շահույթի կամ վնասի ցուցանիշում (չափի մեջ): Նմանապես, միայն այն ակտիվներն ու պարտավորությունները պետք է ներկայացվեն այդ սեգմենտի համար, որոնք ներառվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից կիրառվող սեգմենտի ակտիվների և սեգմենտի պարտավորությունների ցուցանիշում (չափի մեջ): Եթե գումարները բաշխվում են հաշվետու սեգմենտի շահույթին կամ վնասին, ակտիվներին կամ պարտավորություններին, ապա այդ գումարները պետք է բաշխվեն խելամիտ հիմունքով:

26. Եթե գլխավոր գործառնական որոշում կայացնողը կիրառում է գործառնական սեգմենտի շահույթի կամ վնասի միայն մեկ ցուցանիշ (չափ), սեգմենտի ակտիվների և սեգմենտի պարտավորությունների միայն մեկ ցուցանիշ (չափ), ապա սեգմենտի գործունեության արդյունքները գնահատելու և միջոցները, սեգմենտի շահույթը կամ վնասը, ակտիվները և պարտավորությունները բաշխելու ձևը որոշելու համար սեգմենտի ակտիվները կամ պարտավորությունները պետք է ներկայացվեն այդ ցուցանիշներով: Եթե գլխավոր գործառնական որոշում կայացնողը կիրառում է գործառնական սեգմենտի շահույթի կամ վնասի, սեգմենտի ակտիվների կամ պարտավորությունների մեկից ավելի ցուցանիշ (չափ), ապա ներկայացված ցուցանիշները պետք է լինեն այն ցուցանիշները, որոնք, ղեկավարության կարծիքով, որոշվել են չափման այն սկզբունքների համաձայն, որոնք առավելագույնս համապատասխանում են կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների համապատասխան գումարները չափելիս կիրառվածներին:

27. Կազմակերպությունը յուրաքանչյուր հաշվետու սեգմենտի համար պետք է ներկայացնի սեգմենտի շահույթի կամ վնասի, ակտիվների և պարտավորությունների չափման բացատրություն: Կազմակերպությունը նվազագույնը պետք է բացահայտի ստորև նշվածը՝

   ա) հաշվետու սեգմենտների միջև իրականացվող գործառնությունների հաշվապահական հաշվառման հիմունքը,

   բ) հաշվետու սեգմենտների շահույթի կամ վնասի և կազմակերպության (մինչև շահութահարկի գծով ծախսը կամ փոխհատուցումը) շահույթի կամ վնասի և ընդհատվող գործունեության (եթե ակնհայտ չէ 28-րդ պարագրաֆում

նկարագրված համապատասխանեցումներից) չափումների միջև տարբերությունների բնույթը: Նշված տարբերությունները կարող են ներառել հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և կենտրոնացված եղանակով կատարված ծախսումների բաշխման քաղաքականությունը, որոնք անհրաժեշտ են՝ հաշվետու սեգմենտի վերաբերյալ տեղեկատվությունը հասկանալու համար,

գ) հաշվետու սեգմենտների ակտիվների և ընդհանուր կազմակերպության ակտիվների (եթե ակնհայտ չէ 28-րդ պարագրաֆում նկարագրված համապատասխանեցումներից) չափումների միջև տարբերությունների բնույթը: Նշված տարբերությունները կարող են ներառել հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և համատեղ օգտագործվող ակտիվների բաշխման քաղաքականությունը, որոնք անհրաժեշտ են՝ հաշվետու սեգմենտի վերաբերյալ տեղեկատվությունը հասկանալու համար,

դ) հաշվետու սեգմենտների պարտավորությունների և կազմակերպության պարտավորությունների (եթե ակնհայտ չէ 28-րդ պարագրաֆում նկարագրված համապատասխանեցումներից) չափումների միջև տարբերությունների բնույթը: Նշված տարբերությունները կարող են ներառել հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և համատեղ օգտագործվող պարտավորությունների բաշխման քաղաքականությունը, որոնք անհրաժեշտ են՝ հաշվետու սեգմենտի վերաբերյալ տեղեկատվությունը հասկանալու համար,

ե) հաշվետու սեգմենտի շահույթը կամ վնասը որոշելու համար օգտագործված չափման մեթոդներում նախորդ ժամանակաշրջաններից բխող որևէ փոփոխության բնույթը և այդ փոփոխությունների ազդեցությունը (եթե այդպիսիք կան) սեգմենտի շահույթի կամ վնասի ցուցանիշի (չափի) վրա,

զ) հաշվետու սեգմենտներին կատարված բոլոր ասիմետրիկ բաշխումների բնույթը և հետևանքը: Օրինակ՝ կազմակերպությունը կարող է մաշվածության ծախսը բաշխել սեգմենտին՝ առանց համապատասխան մաշվող ակտիվները տվյալ սեգմենտին բաշխելու:

Համապատասխանեցումներ

28. Կազմակերպությունը ստորև նշվածներից բոլորի համար պետք է ներկայացնի համապատասխանեցումներ՝

ա) հաշվետու սեգմենտների հասույթների ընդհանուր գումարները կազմակերպության հասույթի գումարների հետ,

բ) հաշվետու սեգմենտների շահույթի կամ վնասի ցուցանիշների (չափերի) հանրագումարը կազմակերպության շահույթի կամ վնասի (մինչև շահութահարկի գծով ծախսը/փոխհատուցումը) և ընդհատվող գործունեությունների գումարների հետ: Այնուամենայնիվ, եթե կազմակերպությունը հաշվետու

սեգմենտներին բաշխում է այնպիսի հոդվածներ, ինչպիսիք են, օրինակ, հարկային ծախսը (հարկային փոխհատուցումը), ապա կազմակերպությունը սեգմենտի շահույթի կամ վնասի ցուցանիշների (չափերի) հանրագումարները կարող է կազմակերպության շահույթի կամ վնասի հետ համապատասխանեցնել այդ հոդվածներից հետո,

գ) հաշվետու սեգմենտների ակտիվների հանրագումարը կազմակերպության ակտիվների հետ, եթե սեգմենտային ակտիվները ներկայացված են 23-րդ պարագրաֆի համաձայն,

դ) հաշվետու սեգմենտների պարտավորությունների հանրագումարը կազմակեր-պության պարտավորությունների հետ, եթե սեգմենտի պարտավորությունները ներկայացվում են 23-րդ պարագրաֆի համաձայն,

ե) հաշվետու սեգմենտների յուրաքանչյուր բացահայտված այլ էական հոդվածների հանրագումարը կազմակերպության համապատասխան գումարի հետ:

Բոլոր էական համապատասխանեցվող հոդվածները պետք է առանձին որոշակիաց-վեն և նկարագրվեն: Օրինակ՝ հաշվետու սեգմենտի շահույթը կամ վնասը կազմակերպության շահույթի կամ վնասի հետ համապատասխանեցնելու համար անհրաժեշտ յուրաքանչյուր էական ճշգրտման գումարը, որն առաջանում է տարբեր հաշվապահական հաշվառման քաղաքականությունների կիրառումից, պետք է առանձին որոշակիացվի և նկարագրվի:

Նախկինում ներկայացված տեղեկատվության վերահաշվարկ

29. Եթե կազմակերպությունը փոփոխում է իր ներքին կազմակերպական կառուցվածքն այնպես, որ իր հաշվետու սեգմենտների կազմում առաջանում են փոփոխություններ, ապա ավելի վաղ ժամանակաշրջանների, ներառյալ միջանկյալ ժամանակաշրջան-ների, համապատասխան տեղեկատվությունը պետք է վերահաշվարկվի, եթե դրա վերաբերյալ տեղեկատվությունն առկա է, և այն մշակելու արժեքը չի համարվում չափազանց բարձր: Տեղեկատվության առկա չլինելու կամ դրա մշակման արժեքի չափազանց բարձր լինելու որոշումը պետք է կայացվի բացահայտման յուրաքանչյուր առանձին հոդվածի համար: Հետևելով հաշվետու սեգմենտների կազմի փոփոխությանը՝ կազմակերպությունը պետք է բացահայտի՝ արդյոք այն վերա-հաշվարկել է ավելի վաղ ժամանակաշրջանների սեգմենտային տեղեկատվության համապատասխան հոդվածները, թե ոչ:

30. Եթե կազմակերպությունը փոփոխել է իր ներքին կազմակերպական կառուցվածքն այնպես, որ հաշվետու սեգմենտների կազմում առաջանում են փոփոխություններ, և եթե ավելի վաղ ժամանակաշրջանների, ներառյալ միջանկյալ ժամանակաշրջանների, սեգմենտային տեղեկատվությունը չի վերահաշվարկվում՝ այդ փոփոխությունն ար-տացոլելու համար, ապա կազմակերպությունը այն տարվա ընթացքում, երբ տեղի է

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ունեցել փոփոխությունը, պետք է բացահայտի ընթացիկ ժամանակաշրջանի սեգմենտային տեղեկատվությունը սեգմենտավորման և՛ հին, և՛ նոր հիմունքներով, եթե անհրաժեշտ տեղեկատվությունն առկա է, և այն մշակելու արժեքը չափազանց բարձր չէ:

Բացահայտումներ ամբողջ կազմակերպության մասշտաբով

31. 32-34-րդ պարագրաֆները կիրառվում են սույն ՖՀՄՍ-ով առաջնորդվող բոլոր կազմակերպությունների համար, ներառյալ այն կազմակերպությունների, որոնք ունեն միայն մեկ հաշվետու սեգմենտ: Որոշ կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեությունները կազմավորված չեն ըստ արտադրանքների և ծառայությունների տարբերությունների կամ աշխարհագրական տարածքների գործունեության տարբերությունների հիմունքի: Նման կազմակերպության հաշվետու սեգմենտները կարող են հասույթները ներկայացնել սկզբունքորեն տարբեր արտադրանքների և ծառայությունների լայն տեսականու գծով, կամ կազմակերպության մեկից ավել հաշվետու սեգմենտները կարող են տրամադրել սկզբունքորեն նույն արտադրանքներն ու ծառայությունները: Նմանապես, կազմակերպության հաշվետու սեգմենտները կարող են ակտիվներ ունենալ աշխարհագրական տարբեր տարածքներում և հասույթներ ներկայացնել աշխարհագրական տարբեր տարածքների գնորդներից, կամ կազմակերպության մեկից ավելի հաշվետու սեգմենտները կարող են գործել աշխարհագրական նույն տարածքում: 32-34-րդ պարագրաֆների համաձայն պահանջվող տեղեկատվությունը պետք է ներկայացվի, միայն եթե այն չի տրամադրվում որպես սույն ՖՀՄՍ-ով պահանջվող հաշվետու սեգմենտի տեղեկատվության մաս:

Տեղեկատվություն արտադրանքների և ծառայությունների վերաբերյալ

32. Կազմակերպությունը յուրաքանչյուր արտադրանքի կամ ծառայության, կամ համանման արտադրանքների և ծառայությունների յուրաքանչյուր խմբի համար պետք է ներկայացնի արտաքին գնորդներից ստացված հասույթը, բացառությամբ եթե անհրաժեշտ տեղեկատվությունն առկա չէ, և դրա մշակման արժեքը չափազանց բարձր կլինի, որոնց դեպքում այդ փաստը պետք է բացահայտվի: Ներկայացված հասույթի գումարները պետք է հիմնված լինեն կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար օգտագործվող ֆինանսական տեղեկատվության վրա:

Տեղեկատվություն աշխարհագրական տարածքների վերաբերյալ

33. Կազմակերպությունը պետք է ներկայացնի ստորև նշված աշխարհագրական տեղեկատվությունը, բացառությամբ եթե անհրաժեշտ տեղեկատվությունն առկա չէ, և դրա մշակման արժեքը չափազանց բարձր կլինի՝

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ա) արտաքին գնորդներից ստացված հասույթները՝ (i) վերագրված կազմակերպության գտնվելու երկրին, և (ii) վերագրված բոլոր արտասահմանյան երկրներին ամբողջությամբ, որոնցից կազմակերպությունը ստանում է հասույթներ: Եթե առանձին արտասահմանյան երկրին վերագրվող արտաքին գնորդներից ստացված հասույթներն էական են, ապա այդ հասույթները պետք է բացահայտվեն առանձին: Կազմակերպությունը պետք է բացահայտի առանձին երկրներին արտաքին գնորդներից ստացված հասույթի վերագրման հիմունքը,

բ) ոչ ընթացիկ ակտիվները[2], բացառությամբ ֆինանսական գործիքների, հետաձգված հարկային ակտիվների, հետաշխատանքային հատուցումների գծով ակտիվների և ապահովագրական պայմանագրերից առաջացող իրավունք-ների՝ (i) տեղակայված կազմակերպության գտնվելու երկրում, և (ii) տեղակայված բոլոր այն արտասահմանյան երկրներում՝ որպես ամբողջություն, որտեղ կազմակերպությունն ունի ակտիվներ: Եթե առանձին արտասահմանյան երկրում պահվող ակտիվներն էական են, ապա այդ ակտիվները պետք է առանձին բացահայտվեն:

Ներկայացված գումարները պետք է հիմնված լինեն այն ֆինանսական տեղեկատվության վրա, որն օգտագործվում է կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Եթե անհրաժեշտ տեղեկատվությունն առկա չէ, և դրա մշակման արժեքը չափազանց բարձր կլինի, ապա այդ փաստը պետք է բացա-հայտվի: Կազմակերպությունը՝ ի լրումն սույն պարագրաֆով պահանջվող տեղեկատվության, կարող է ներկայացնել երկրների խմբերի վերաբերյալ աշխարհագրական տեղեկատվության ենթագումարները:

Տեղեկատվություն խոշոր գնորդների վերաբերյալ

34. Կազմակերպությունը պետք է տեղեկատվություն ներկայացնի իր խոշոր գնորդներից կախվածության չափի վերաբերյալ: Եթե առանձին արտաքին գնորդի հետ գործառնություններից ստացած հասույթները կազմում են կազմակերպության ընդհանուր հասույթների 10 տոկոսը կամ ավելին, ապա կազմակերպությունը պետք է բացահայտի այդ փաստը, յուրաքանչյուր այդպիսի գնորդից ստացված հասույթի ամբողջ գումարը, ինչպես նաև որոշակիացնի հասույթները ներկայացնող սեգմենտը կամ սեգմենտները: Կազմակերպությունը կարիք չունի բացահայտելու խոշոր գնորդին կամ այդ գնորդից հասույթի գումարը, եթե յուրաքանչյուր սեգմենտ ներկայացրել է հասույթ այդ գնորդից: Սույն ՖՀՄՍ-ի նպատակով՝ հաշվետու կազմակերպությանը հայտնի կազմակերպությունների խումբը, որը գտնվում է ընդհանուր հսկողության տակ, պետք է դիտարկվի որպես առանձին գնորդ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է

[2] Ըստ իրացվելիության ներկայացման համաձայն դասակարգված ակտիվների առումով՝ ոչ ընթացիկ ակտիվներն այն ակտիվներն են, որոնք ներառում են այնպիսի գումարներ, որոնց վերականգնումն ակնկալվում է հաշվետու ժամանակաշրջանից ավելի քան տասներկու ամիս հետո:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

կատարել դատողություն՝ գնահատելու՝ արդյոք պետությունը (ներառյալ պետական գործակալությունները (նախարարությունները) և նման մարմինները՝ լինեն տեղական, ազգային թե միջազգային) և հաշվետու կազմակերպությանը հայտնի կազմակերպությունները, որոնք գտնվում են այդ պետական հսկողության ներքո, դիտարկվում են որպես առանձին գնորդ: Սա գնահատելիս, հաշվետու կազմակերպությունը պետք է հաշվի առնի այդ կազմակերպությունների միջև տնտեսական ինտեգրման աստիճանը:

Անցումը և ուժի մեջ մտնելը

35. Կազմակերպությունը պետք է կիրառի սույն ՖՀՄՍ-ն 2009 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների տարեկան ֆինանսական հաշվետվությունների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը սույն ՖՀՄՍ-ն կիրառում է մինչև 2009 թվականի հունվարի 1-ը, ապա պետք է բացահայտի այդ փաստը:

35Ա. 2009 թվականի ապրիլին հրապարակված *«ՖՀՄՍ-ների բարելավումներ»* փաստաթուղթը փոփոխել է 23-րդ պարագրաֆը: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունը 2010 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը կիրառում է այդ փոփոխությունը ավելի վաղ ժամանակաշրջանի համար, պետք է բացահայտի այդ փաստը:

36. Նախորդ տարիների սեգմենտային տեղեկատվությունը, որը ներկայացվել է որպես կիրառվող սկզբնական տարվա համադրելի տեղեկատվություն (ներառյալ՝ 2009 թվականի ապրիլին փոփոխված պարագրաֆ 23-ի կիրառումը), պետք է վերահաշ-վարկվի՝ սույն ստանդարտի պահանջներին համապատասխանելու համար, բացառությամբ եթե անհրաժեշտ տեղեկատվությունն առկա չէ, և դրա մշակման արժեքը կլինի չափազանց բարձր:

36Ա. ՀՀՄՍ 1-ը (վերանայված՝ 2007 թվականին), փոփոխել է ՖՀՄՍ-ներում կիրառվող տերմինաբանությունը: Ի լրումն՝ նաև փոփոխվել է 23-րդ պարագրաֆի (զ) կետը: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները 2009 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Եթե կազմակերպությունը կիրառում է ՀՀՄՍ 1-ը (վերանայված՝ 2007 թվականին) ավելի վաղ ժամանակաշրջանի համար, ապա այդ փոփոխությունները պետք է կիրառվեն այդ ավելի վաղ ժամանակաշրջանի համար:

36Բ. *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* ՀՀՄՍ 24-ով (վերանայված 2009 թվականին) փոփոխվել է 34-րդ պարագրաֆը՝ 2011 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Եթե կազմակերպությունը կիրառում է ՀՀՄՍ 24-ը (վերանայված 2009 թվականին) ավելի

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

վաղ ժամանակաշրջանի համար, պետք է կիրառի 34-րդ պարագրաֆի փոփոխությունը այդ ավելի վաղ ժամանակաշրջանի համար:

36Գ. 2013 թվականի դեկտեմբերին հրապարակված «ՖՀՄՍ-ների *տարեկան բարելավումներ. 2010-2012 ցիկլ»* փաստաթուղթը փոփոխել է 22-րդ և 28-րդ պարագրաֆները: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները 2014 թվականի հուլիսի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը կիրառում է այդ փոփոխությունները ավելի վաղ ժամանակաշրջանի համար, պետք է բացահայտի այդ փաստը:

ՀՀՄՍ 14-ի գործողության դադարեցումը

37. Սույն ՖՀՄՍ-ն փոխարինում է *«Սեգմենտային հաշվետվություններ»* ՀՀՄՍ 14-ին:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Հավելված Ա

Սահմանված տերմին

Սույն հավելվածը հանդիսանում է սույն ՖՀՄՍ-ի անբաժանելի մասը:

գործառնական սեգմենտ Գործառնական սեգմենտը կազմակերպության բաղադրիչ է, որը՝

ա) ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ նույն կազմակերպության այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը).

բ) որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են կազմակերպության գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշումներ կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով.

գ) որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ